ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-7/33-3

ք. Երևան 15-ը հուլիսի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ս. Հայրապետյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.11 Պայմանագրի կատարման փուլում ներկայացնել համապատասխանության սերտիֆիկատ:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում 12 800 370 (տասներկու միլիոն ութ հարյուր հազար երեք հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այնակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված քսան աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	Կոտայքի մարզ, գյուղ Զովունի
ՀՀ ֆինանսների նախարարության	«Արդշինբանկ» ՓԲԸ Նաիրի մ/ճ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 2473700214350000
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 03300526
ՀՎՀՀ 02522157	տնօրեն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ս.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-7/33-3 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	շերեփ /Շերեփ փոքր ալյումինե/	Շերեփ փոքր ալյումինե ԳՕՍՏ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից: Բռնակի երկարությունը 236մմ +/-5մմ, շերեփի խորությունը 50մմ +/-2մմ, տրամագիծը 108մմ +/-2մմ, մետաղի հաստությունը 4-4,5մմ: Շերեփները փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Յուրաքանչյուր փաթեթում 20 հատ: Փաթեթները տեղադրված ստվարաթղթե արկղում, յուրաքանչյուր արկղում 2 փաթեթ: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:
2	կաթսա մետաղական /Կաթսա 4լ. ալյումինե առանց կափարիչ/	Կաթսա 4լ. ալյումինե ԳՕՍՏ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից, առանց կափարիչ՝ խորությունը 100-105մմ, վերին մասի արտաքին տրամագիծը 277մմ +/-5մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 3մմ, հիմքի տրամագիծը 222մմ +/-5մմ, երկու բռնակով, յուրաքանչյուրը 70-80մմ x 30-40մմ, կաթսան և բռնակը մեկ ամբողջական: Կաթսայի ալյումինե բռնակի վրա 2 հատ գամերով ամրացված պոլիպրոպիլենե ջերմամեկուսիչ շերտ: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4 հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:
3	կաթսա մետաղական /Կաթսա 6լ. ալյումինե առանց կափարիչի/	Կաթսա 6լ. ալյումինե, ԳՕՍՏ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից, առանց կափարիչ՝ խորությունը 128մմ +/-5մմ, վերին մասի արտաքին տրամագիծը 277մմ +/-5մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 3մմ, հիմքի տրամագիծը 222մմ +/-5մմ, երկու բռնակով, յուրաքանչյուրը 70-80մմ x 30-40մմ, կաթսան և բռնակը մեկ ամբողջական: Կաթսայի ալյումինե բռնակի վրա 2 հատ գամերով ամրացված պոլիպրոպիլենե ջերմամեկուսիչ շերտ: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4 հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին:
4	կաթսա մետաղական /Կաթսա 8լ. ալյումինե առանց կափարիչի/	Կաթսա 8լ. ալյումինե ԳՕՍՏ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից, առանց կափարիչ՝ խորությունը 160մմ +/-5մմ, վերին մասի արտաքին տրամագիծը 277մմ +/-5մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 3մմ, հիմքի տրամագիծը 222մմ +/-5մմ, երկու բռնակով, յուրաքանչյուրը՝ 70-80մմ x 30-40մմ, կաթսան և բռնակը մեկ ամբողջական մետաղից: Կաթսայի ալյումինե բռնակի վրա 2 հատ գամերով ամրացված պոլիպրոպիլենե ջերմամեկուսիչ շերտ:: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4 հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:
5	կաթսա մետաղական /Կաթսա 6լ. ալյումինե կափարիչով/	Կաթսա 6լ. ալյումինե, կափարիչով, ԳՕՍՏ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից: Կաթսան 22 համարի, կաթսայի տրամագիծը 220մմ +/-5մմ, կաթսայի մետաղի հաստությունը ոչ պակաս 2մմ, կափարիչի հաստությունը ոչ պակաս 1,5մմ: Երկու բռնակով՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես,որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 20մմ+/-2մմ և 40մմ+/-2մմ հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 15մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 15մմ: Տարողության տեսակը <<Խորը>>: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Յուրաքանչյուր կաթսան

		փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4 հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:
6	կաթսա մետաղական /Կաթսա 8լ. ալյումինե կափարիչով/	Կաթսա 8լ. ալյումինե, կափարիչով, ԳՕՍՏ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից: Կաթսան 24 համարի, կաթսայի տրամագիծը 240մմ +/-5մմ, կաթսայի մետաղի հաստությունը ոչ պակաս 2մմ, կափարիչի հաստությունը 1.5-2մմ: Երկու բռնակով՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես, որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 20մմ+/-2մմ և 40մմ+/-2մմ հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 15մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 15մմ: Տարողության տեսակը <<Խորը>>: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին:
7	կաթսա մետաղական /Կաթսա 10լ. ալյումինե կափարիչով/	Կաթսա 10լ. ալյումինե, կափարիչով, ԳՕՍՏ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից, կաթսան 26 համարի, կաթսայի տրամագիծը 260մմ, +/-5մմ, կաթսայի մետաղի հաստությունը ոչ պակաս 2 մմ, կափարիչի հաստությունը 1.5-2 մմ: Երկու բռնակով՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես,որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 20մմ+/-2մմ և 40մմ+/-2մմ հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 15մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 15մմ: Տարողության տեսակը <<Խորը>>: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4 հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին:
8	կաթսա մետաղական /Կաթսա 20լ. ալյումինե կափարիչով/	Կաթսա 20լ. ալյումինե, կափարիչով, ԳՕՍՏ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից: Կաթսան 34 համարի, կաթսայի տրամագիծը 340մմ +/-5մմ, կաթսայի մետաղի հաստությունը ոչ պակաս 2,5մմ: Կափարիչի հաստությունը 1.5-2մմ: Երկու բռնակով՝ պատրաստված ալյումինից ամրանաձև, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես,որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 25մմ+/-2մմ և 45մմ+/-2մմ հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 100մմ, բռնակի հաստությունը ոչ պակաս Փ10մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ:Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:

9	կաթսա մետաղական /Կաթսա 40լ. ալյումինե կափարիչով/	Կաթսա 40լ. ալյումինե, կափարիչով, ԳՕՍՏ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից: Կաթսան 40 համարի, կաթսայի տրամագիծը 440մմ +/-5մմ, կաթսայի մետաղի հաստությունը ոչ պակաս 3մմ: Կափարիչի հաստությունը 1.5-2մմ: Երկու բռնակով՝ պատրաստված ալյումինից ամրանաձև, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես, որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 40մմ+/-2մմ և 60մմ+/-2մմ հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 100մմ, բռնակի հաստությունը ոչ պակաս Փ14մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 80մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4 հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին:
10	զինվորական հենակետի համար նախատեսված կաթսաներ /3 կաթսաներից բաղկացած ալյումինե կաթսաների կոմպլեկտ/	3 կաթսաներից բաղկացած կաթսաների լրակազմ, ԳՕՍՏ 17151-81 սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից: Տեսքը գլանաձև մեկը մյուսի մեջ մտնող: Մեծ կաթսան 15լ տարողության +/-5%, տրամագիծը 320մմ +/-2մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 2.0մմ, միջին կաթսան 10լ տարողության +/-5%, տրամագիծը 260մմ +/-2մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 2.0մմ, փոքր կաթսան 6լ տարողության +/-5%, տրամագիծը 220մմ +/-2մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 2.0մմ: Յուրաքանչյուր կաթսա լինի երկու բռնակով՝ պատրաստված ալյումինից ամրանաձև, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես, որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 20մմ+/-2մմ և 40մմ+/-2մմ հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը մեծ և միջին կաթսաներինը ոչ պակաս 100մմ+/-5մմ, փոքր կաթսայինը՝ ոչ պակաս 95մմ, բռնակի հաստությունը ոչ պակաս Փ8մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կափարիչների կենտրոնում բռնակներ՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4 լրակազմ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին:
11	դույլ, ցինկապատ /Դույլ ցինկապատ/	Դույլ ցինկապատ՝ ԳՈՍՏ 20558-82, տարողությունը 12լ. +/-4%, արտադրությունը ոչ հին քան 2019թ. պատրաստված ցինկապատ բարակաթերթ մետաղական թիթեղից, մետաղի հաստությունը ոչ պակաս 0,35մմ: Դույլը պետք է ունենա մետաղյա ամրանաձև բռնակ: Բռնակի հաստությունը ոչ պակաս Փ4մմ: Բռնակը դույլին ամրացնելու համար նախատեսված ելուստները դույլին պետք է ամրացված լինեն ցինկե գամերով: Դույլի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ դույլի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Դույլը փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75, դասավորված 10 հատով մեկը մյուսի մեջ: Փաթեթավորված 10 հատ դույլերը տեղադրված ստվարաթղթե արկղում: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին:
12	շերեփ /Շերեփ խոհարարի ալյումինե/	Շերեփ խոհարարի ալյումինե, ԳՕՍՏ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից: Տեսքը գնդաձև, տրամագիծը 181մմ +/-5մմ, բարձրությունը 86մմ +/-5մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 4մմ, բռնակը փայտյա, փայտի տեսակը՝ չամ կամ լորենի: Բռնակի երկարությունը 1100մմ +/-100մմ, տրամագիծը 32մմ +/-5մմ: Շերեփները փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Շերեփի գլխիկները միմյանցից առանձնացված փաթեթավորման թղթով: Փաթեթավորված շերեփները տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 5 հատ: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին:

13	սպասք /Փլավ քամիչ ալյումինե/	Փլավ քամիչ ալյումինե՝ ԳՕՍ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից: Տեսքը կիսագնդաձև, տրամագիծը 305մմ +/-5մմ, բարձրությունը 185մմ +/-5մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 2մմ: Քամիչի վերին եզրային մասից ոչ պակաս 5մմ հետ ծալված դեպի արտաքին շերտը և սեղմված դեպի հիմքը: Քամիչի վերին եզրային մասից 50մմ +/-3մմ դեպի ներքև ամբողջ մակերեսով անցքեր, անցքի տրամագիծը 2,5- 4մմ: Անցքերի հեռավորությունը միմյանցից 10-12մմ:Քամիչը երկու բռնակով՝ մեծ և փոքր: Մեծ բռնակի երկարությունը 305մմ +/-5մմ, լայնությունը 45մմ +/-5մմ, հաստությունը ոչ պակաս 3մմ, ամրացված հիմքին 3հատ ոչ պակաս 4մմ հաստության ալյումինե գամերով: Բռնակը ուղղագիծ առանցքով ռելիեֆային ամրություն ապահովելու համար: Փոքր բռնակի երկարությունը 55մմ +/-5մմ, լայնությունը 45մմ +/-5մմ, հաստությունը ոչ պակաս 3մմ, ամրացված հիմքին 3հատ ոչ պակաս 4մմ հաստության գամերով: Քամիչները փաթեթավորված թղթով ԳՕՍ 8273-75: Փաթեթավորված քամիչները տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 10 հատ:Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին:
14	սպասք /Քափկիր չ/պ/	Քափկիր ԳՕՍ Բ 51687-2000, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար չժանգոտվող պողպատից: Բռնակի երկարությունը 400մմ +/-5մմ, լայնությունը ոչ պակաս 20մմ, աշխատող մասի տրամագիծը ոչ պակաս 100մմ, հաստությունը ոչ պակաս 1մմ: Աշխատող մասի ամբողջ մակերեսով անցքեր, անցքի տրամագիծը 2,5-4մմ: Անցքերի հեռավորությունը միմյանցից 4-8մմ: Բռնակը ուղղագիծ առանցքով ռելիեֆային, ամրություն ապահովելու համար: Քափկիրի բռնակի վրա դարձերեսային մասում ռելիեֆային մակնանշումով դրոշմավորված՝ <<Չժանգոտվող պողպատ>> գրառումը: Մակնանշման բարձրությունը 5-8մմ: Քափկիրը փաթեթավորված թղթով ԳՕՍ 8273-75: Փաթեթավորված քափկիրները տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 50 հատ: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:

Ծանոթություն՝ Մատակարարվող ապրանքը չպետք է լինի նախկինում օգտագործված:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2019թ-ին՝ ընդ որում	
						մինչև 31.07.2019թ.	3-րդ եռամսյակ
1	շերեփ /Շերեփ փոքր ալյումինե/	հատ	800	618	494400	800	
2	կաթսա մետաղական /Կաթսա 4լ. ալյումինե առանց կափարիչ/	հատ	148	3990	590520	70	78
3	կաթսա մետաղական /Կաթսա 6լ. ալյումինե առանց կափարիչի/	հատ	430	7290	3134700	200	230
4	կաթսա մետաղական /Կաթսա 8լ. ալյումինե առանց կափարիչի/	հատ	430	8190	3521700	200	230
5	կաթսա մետաղական /Կաթսա 6լ. ալյումինե կափարիչով/	հատ	50	4980	249000	25	25
6	կաթսա մետաղական /Կաթսա 8լ. ալյումինե կափարիչով/	հատ	50	5397	269850	25	25
7	կաթսա մետաղական /Կաթսա 10լ. ալյումինե կափարիչով/	հատ	50	6270	313500	25	25
8	կաթսա մետաղական /Կաթսա 20լ. ալյումինե կափարիչով/	հատ	50	9840	492000	25	25
9	կաթսա մետաղական /Կաթսա 40լ. ալյումինե կափարիչով/	հատ	50	23949	1197450	25	25
10	զինվորական հենակետի համար նախատեսված կաթսաներ /3 կաթսաներից բաղկացած ալյումինե կաթսաների կոմպլեկտ/	լրակազմ	50	24960	1248000	25	25
11	դույլ, ցինկապատ /Դույլ ցինկապատ/	հատ	400	1080	432000	200	200
12	շերեփ /Շերեփ խոհարարի ալյումինե/	հատ	45	2850	128250	45	
13	սպասք /Փլավ քամիչ ալյումինե/	հատ	45	13770	619650	45	
14	սպասք /Քափկիր չ/պ/	հատ	45	2430	109350	45	

Ծանոթություն՝ մատակարարման վայրը՝ ք.Երևան, Սարմի 103:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ԴԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ
Տնօրեն

Ս.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-7/33-3 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ.-ին ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ.՝ ընդ որում					
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	շերեփ /Շերեփ փոքր ալյումինե/	39221370/3/10/2	494400	494400	494400	494400	494400	494400
2	կաթսա մետաղական /Կաթսա 4լ. ալյումինե առանց կափարիչ/	39221312/11/10/2	590520	590520	590520	590520	590520	590520
3	կաթսա մետաղական /Կաթսա 6լ. ալյումինե առանց կափարիչի/	39221312/12/10/2	3134700	3134700	3134700	3134700	3134700	3134700
4	կաթսա մետաղական /Կաթսա 8լ. ալյումինե առանց կափարիչի/	39221312/13/10/2	3521700	3521700	3521700	3521700	3521700	3521700
5	կաթսա մետաղական /Կաթսա 6լ. ալյումինե կափարիչով/	39221312/14/10/2	249000	249000	249000	249000	249000	249000
6	կաթսա մետաղական /Կաթսա 8լ. ալյումինե կափարիչով/	39221312/15/10/2	269850	269850	269850	269850	269850	269850
7	կաթսա մետաղական /Կաթսա 10լ. ալյումինե կափարիչով/	39221312/16/10/2	313500	313500	313500	313500	313500	313500
8	կաթսա մետաղական /Կաթսա 20լ. ալյումինե կափարիչով/	39221312/17/10/2	492000	492000	492000	492000	492000	492000
9	կաթսա մետաղական /Կաթսա 40լ. ալյումինե կափարիչով/	39221312/18/10/2	1197450	1197450	1197450	1197450	1197450	1197450
10	զինվորական հենակետի համար նախատեսված կաթսաներ /3 կաթսաներից բաղկացած ալյումինե կաթսաների կոմպլեկտ/	39221313/2/10/20	1248000	1248000	1248000	1248000	1248000	1248000
11	դույլ, ցինկապատ /Դույլ ցինկապատ/	39224332/4/10/2	432000	432000	432000	432000	432000	432000
12	շերեփ /Շերեփ խոհարարի ալյումինե/	39221370/4/10/2	128250	128250	128250	128250	128250	128250
13	սպասք /Փլավ քամիչ ալյումինե/	39221120/16/10/2	619650	619650	619650	619650	619650	619650
14	սպասք /Քափկիր չ/պ/	39221120/17/10/2	109350	109350	109350	109350	109350	109350

Ծանոթություն՝ Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ԴԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ
Տնօրեն

Ս.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-7/33-3 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-7/33-3 պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն